

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Դաւիթ՝
հոսիւ տղան



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children


www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Երկար ժամանակ առաջ, Իսրայելի Սաուլ
թագաւորին օրով, Դաւիթ անունով տղայ մը կար,
որ եօթը եղբայրներուն կ'օգնէր հովուելու իրենց
հոտը:



Թեև ինք ամենեն նորաստին էր, բայց Դավիթ
զօրաւոր, քաջարի տղայ մըն էր, որ կը սիրէր եւ
կը վստահէր Աստուծոյ: Ան Բերթղէիւմ քաղաքը
կ'ապրէր:



Օրին մեկը առիւծ մը յարձակեցաւ հոտին
գրայ, որպէսզի գառնուկ մը գողնայ
իբր ճաշ: Երիտասարդ Դաւիթ
յարձակեցաւ յարձակողին վրայ:
Գառնուկը հեռու քշելով: Ան
գազանին մօրուքէն բռնեց եւ
սատկեցուց զայն: Դաւիթ
գիտեր, որ Աստուած օգնեց
իրեն:



Սամուէլ, Աստուծոյ մարգարէն
տակաւին տխուր էր, որ Սաուլ
թագաւոր Աստուծոյ շատ
նեղացուց: "Որքա՞ն պիտի
տխրիս Սաուլի համար",
հարցուց Աստուած Սամուէլի:



"Ես քեզի կը դրկեմ ճեսը...
Արդէն ես հայթայթեր եմ
ինծի համար թագաւորը
իր տղոց մէջէն": Ճէյսը
Դաւիթին հայրն էր:



Թեև Սամուել գիտեր, որ
Սաուլ թագաւոր կրնայ
մեռցնել զինք ուրիշ
թագաւոր ընտրելուն,
սակայն մարգարէն
հնազանդեցաւ Աստուծոյ:





Երբ Սամուէլ
հասաւ, ճէյսը իր եօթը
զաւակները անցուց
Սամուէլի առջեւէն: Եւ
Սամուէլ ըսաւ ճէյսի.
"Տերը ասոնք չէ
ընտրած", ուրեմն
մնաց միայն Դաւիթը,
ամենակրտսերը: Ան
դուրսն էր ոչխարներուն
հետ: Անոնք Դաւիթը
բերին: Տերը ըսաւ.
"Ելի՛ր, օճէ զինք,
որովհետեւ
այս է ինքը":



Սաուլի պալատին մէջ Աստուծոյ հոգին լքեց
Սաուլը, ան շատ անհանդարտ մարդ մը դարձաւ,
իր ծառաները խորհուրդը, որ
հանդարտ երաժշտութիւն
կրնայ Սաուլի միտքը




հանդարտեցնել:
Անոնցմէ մէկը կը
ճանչնար մարդ
մը, որ լար
կը նուագէր:
Կրնա՞ս գիտնալ,
թէ ով էր այդ
երիտասարդը:
Այո: Դաւիթը:



Դաւիթին երաժշտութիւնը
հանդարտեցուց: Ա՛յո, Դաւիթ
օգնեց անոր, որ լաւ եւ ճիշդ
մտածէ: Սառլ հարցուց ճեսի,
որ Դաւիթը թագաւորին
ծառայութեան ձգէ: Երբ որ
Սառլ վախ կամ որեւէ
հոգեկան ճնշում ունենար
Դաւիթ լար կը նուագեր
անոր: Ատիկա
կ'օգնէր զինք:



Դաւիթ տուն դառնալէ ետք, Սաուլ մեծ պատերազմ մղեց լիսդինցիներուն հետ: Դաւիթի եղբայրները Սաուլի բանակին մէջ կռուեցան: Ճէյսը ղրկեց Դաւիթը պատերազմի առաջին գիծը, որպէսզի ուտելիք տանի իր եղբայրներուն եւ տեսնէ, թէ ուր են անոնք:



Մեծ պաղեստինցի հսկայ մը, Կոլիաթ, վախցուցած էր բոլոր Իսրայելի զինուորները:



"Դուք մեջեն որեւէ մէկը զատեցէք, եւ ինծի դրկեցէք",
պոռաց Կուլիաթ: "Եթէ կրնայ հետս կռուիլ եւ ինծի
մեռցնել, յետոյ մենք ձեր ծառները կ'ըլլանք:

Բայց եթէ ես զինք մեռցնեմ, դուք մեր
ծառաները պիտի ըլլաք եւ մեզի
ծառայէք": Ամեն


հարայելի
մարդիկը



երբ տեսան
հսկան, փախան
անոր առջեւէն
սաստիկ
վախցած:



Յետոյ Դաւիթ ըսաւ Սաուլի. "Թող որ
որեւէ մէկ մարդո՛ւ սիրտը չվախնայ
անոր համար, քո՛ւ ծառայ պիտի երթայ
եւ կռուի պաղեստինցիներուն հետ":
Սաւուղ կ'ուզէր, որ Դաւիթ երկաթ
հագուստ հագուի եւ սուր շալկէ:
Փոխարէնը Դաւիթ առաւ եւ իր
պարսատիկը եւ հինգ հատ
սահուն քարեր առուէն:



Կոլիաթ խնդաց երբ տեսաւ Երիտասարդ
Տէյվիտը երկաթէ հագուստ չէ հագած: "Քու

միսերդ թռչուններուն պիտի
կ'երակրեմ, որ երկինքին
մէջն են եւ գազաններու,
որոնք դաշտին մէջը",
գոռաց ան:




"Ես քովդ կու
գամ Տիրոջ
անունով",
պատասխանեց
Դաւիթ: "Այսօր
Տերը քեզի իմ
ձեռքս պիտի
յանձնէ,
որովհետեւ այս
պատերազմը
Տիրոջն է":



Յետոյ Դաւիթ
վազեց Կոլիաթին
վրայ: Երբ կը
վազեր քար մը
արձակեց:
Կոլիաթի
ճակատին:
Կոլիաթը ինկաւ:



Դաւիթ Կոլիաթի հսկայ սուրը
առաւ եւ անոր գլուխը կտրեց: Երբ
պաղեստինցիները տեսան, որ
Կոլիաթը մեռաւ, անոնք իրենց
վախէն փախան,
փրկելու համար
իրենց կեանքը:




Սաուլ թագաւոր չիշեց, որ այս նոյն Դաւիթ է,
որ իրեն լար կը նուագէ: Ան Դաւիթը իր բանակին
սպարապետն նշանակեց, յետոյ նախանձեցաւ, որ
ժողովուրդը պատուեց Դաւիթի
յաղթանակները: "Յիմա
ինչ աւելի կրնայ ունենալ,
թագաւորութի՞ւնը" խորհեցաւ
Սաուլ: Անոր համար այդ օրէն
անդին Սաուլի
աչքէն չհեռացաւ
Դաւիթը:




Նորէն Սաուլ թագաւորի միտքը փոթորկեցաւ:
Ուրեմն Դաւիթ անոր երաժշտութիւն կը նուագէր
եւ կը հանդարտէր: Երեք անգամ Սաուլ իր նիզակը
նետեց Դաւիթի վրայ: Բայց Դաւիթէն

ամէն անգամ
փախաւ:
Սաուլ կը

վախնար Դաւիթէն, որովհետեւ գիտէր, թէ Տէրը
հետն էր եւ Սաուլէ
հեռացած էր:




Բայց ճոնաթան Սաուլի տղան, Դաւիթը
իր եղբորը պես կը սիրէր: "Իմ հայրս
Սաուլ կ'ուզէ քեզ սպաննել", զգուշացուց
Տէյվիտի: Ուրեմն Տէյվիտ փախչեցաւ:
Իր կինը պնակակալ մը դրաւ անոր
անկողինին մէջ եւ կես գիշերին
իջեցուց պատուհանէն, որ
փախչի: Երբ Սաուլի մարդիկը
հասան առտուն,
Տէյվիտը գացած
էր:



Տեյվիտ պետք էր փախչեր Սաուլէն հեռու: Նախքան
փախչիլը, ինքը եւ ճոնաթանը իրար հետ դաշինք
կնքեցին: Անոնք խոստացան միշտ զիրար օգնել:



Տխրելի էր, երկու ընկերներ իրար հրաժեշտ տուին:
Տեյվիտ գնաց տեղ մը փնտռելու, ուր առանց վախի
կրնայ ապրիլ եւ Սաուլի զինուորներէն հեռու
առանց իրեն գտնելու:



Դաւիթ՝ հովիւ տղան

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Սամուէլ 16 - 20

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

